

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան դիմել 10 բուրջ, կէս տարվանը 6 բուրջ:

Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ»,
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և օտոս օրերից):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎ ԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Շատ ցանկալի է կը լինէր ԵՆՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Գրական ակնարկներ. Նամակ Բանաստեղծ. Նա-
մակ Գորիսից. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական անալիզի գործող. Բէա-
րական կրթութեան հարցը Ֆրանսիայում. Նամակ
Թիւրքիայից. Արտաքին Լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.
ՀՆՈՒՎԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՇԱՏ ՅԱՆՎԱԿԻ ԿԸ ԼԻՆԵՐ

Այժմ, աւելի քան որ եւ է ժամանակ
յարմար դէպք կը լինի ում հարկն է մը-
տանէ կառավարութեան խնդրելու Թիֆ-
լիսում մի համալսարան հիմնելու մասին:
Համալսարանը, ի հարկէ, Թիֆլիսում
պէտք է լինի, որպէս կովկասեան կենտ-
րոնում և նրա գոյութիւնը ցանկալի է կը
լինի հետեւեալ պատճառներով:
ա) Կովկասեան համալսարանը կուսում-
նասիրէր երկրորդ, բնագիտական բաժնի մի-
ջոցով գիտութիւնը կուսումնասիրէր մեր
երկրի բնական հարստութիւնները, բժշկա-
կան բաժնի կուսումնասիրէր մեր երկրի
ժողովրդական բժշկականութիւնը, իրաւա-
բանական բաժնի կուսումնասիրէր մեր
երկրի այլ և այլ ազգութիւնների ժողովր-
դական իրաւունքը, վերջապէս պատմական-
լեզուագիտական բաժնի կուսումնասիրէր
մեր երկրի պատմութիւնը, նրա հնութիւն-
ները և կովկասեան այլ և այլ ազգութիւն-
ների բարբառները:
բ) Կովկասում համալսարան ունենալու
ժամանակ մեր երիտասարդութիւնը չէր
զնայ հետու հիւսիս, որի կլիմային մեր
երիտասարդները չեն դիմանում և ահազին
պրօցէնտով մեռնում են:
գ) Ունենալով համալսարան Թիֆլիսում
մեր կովկասեան երիտասարդութիւնը կը
մնար իր հայրենի երկրում, որտեղ կը զար-
գանար ինքնուրոյնաբար, պահպանելով իր
յատուկ բնակչութիւնը և չէր ենթարկ-
վի յեղափոխական վարդապետութեան կո-
րստաբեր ներգործութեանը, որը մեր կով-
կասեան ազգութիւնների երիտասարդու-
թեան ողուն կատարելապէս օտար և
խորթ է:
Թիֆլիսում հիմնվելի համալսարանը
համ մեծ օգուտ կը տար երկրին, հետա-
գօտելով երկրի կենսը, բնական հարս-
տութիւնները, ազգագրութիւնը և պատ-
մութիւնը.—համ էլ կը փրկէր մեր երի-
տասարդութիւնը թէ առողջութեան կող-
մից և թէ նիւթիֆլիսումութեան անհիշեթ
վարդապետութիւնից:

Թիւն ունի շողորմողներ մի ամբողջ լէզին,
որոնք առանց նոր պաշտօնակցի ևս արդէն բա-
ւական հմտութեամբ ձեռքեր են լեզուում և խն-
կարկութիւններ անում իսկ մինք կասենք, որ
Խորմեանի, Բաֆֆիի և Մերենցիի և այլ արժանա-
ւոր անունների հետ ցանկալի է շարած տեսնել
աւելի դասակարգ անուններ....
«Արաքսի» լեզուի վրա մենք երկար կանոչ
չենք առնի, բայտ որում այդ հանդիսի լեզուն ա-
ւելի քան անկանոն է. դանազան յողուածները
գրված են դանազան լեզուներով, և տարբերվում
են միմեանցից նոյն իսկ նախադասութիւնների և
բառերի քերականական կառուցակարգութեամբ.
Ընդհանրապէս այդ հրատարակութեան լեզուն
միջնորդ է շատ տարիներ առաջ, մասամբ էլ
այժմ գործածվող այնպիսի աշխարհաբար, որը
զեռ իրանից չէ թոթափել դրաբարի շատ ողալի
աղղեցութիւնը:

«Արաքսի» առաջին գրքի մասին խօսելով 1887
թիւ № 141-ի մէջ, մենք ասացինք, որ միայն ա-
ռաջին տետրակը բաւական չէ հանդիսի ուղղու-
թեան մասին մի որոշ կարծիք յայտնելու համար:
Մենք այն ժամանակ մեր ձեռքին չունէինք բա-
ւական փաստեր, թէ և հէնց առաջին համարից
մեր մէջ կասկած ծագեց, որ այդ հրատարա-
կութիւնը զուրկ պիտի լինի որոշ ուղղութիւնից:
Մեր այդ կասկածը արդարացու, և այժմ հաս-
տատապէս կարող ենք ասել, որ Պետերբուրգում
հրատարակվող ամսագիրը զուրկ է ուղղութիւնից,
զուրկ է նախագծած ճանապարհից, զուրկ է հաս-
տատ պրօգրամայից: Մենք ասելովք ենք համար-
ում կրկին անգամ կանոչ առնել, թէ ողբան մեծ
և ազղու նշանակութիւն ունի ամեն մի պարբե-
րական—ժամանակակից հրատարակութեան հա-
մար ուղղութիւնը և թէ որքան ընկնում է «Ա-
րաքսը» ընթերցողի աչքում գուրկ լինելով գրական
ուղղութիւնից, գաղափարների որոշ վարդապե-
տութիւնից: Այդ դեռ բաւական չէ. «Արաքսը»
նոյն իսկ իբրև դանազան յողուածների ժողովա-
ծու էլ մի առանձին հետաքրքրութիւն չէ ներկա-
յայտնում, որովհետև չէ ամբողջում մշակված
և թող նոյն անգամ կանոչ առնել, թէ ինչու հրա-
տարակողը հէնց այն համարի մէջ չէ գետեղել
այն չուրջ և մեծ խնամքով պատրաստած գրու-
թիւնները, որոնց նա խոստանում է գետեղել
յաջող համարներում: Եթէ «Արաքսի» հրատա-
րակողը ներկայ համարի մէջ գետեղած յողուած-
ները համարել է աւելի լուրջ և աւելի մեծ խը-
նամքով պատրաստած, այնպէս որ շտապել է
դրանց շուտ հրատարակել, միանելը թողնելով
սպաղային, այդ ժամանակ երևակայել կարելի է
թէ ինչ պէտք է լինեն միւս համարների և չուրջ
և խնամքով պատրաստած գրութիւնները, որոնց
ցանկը տպված է հանդիսի II գրքում: Եւ վերջա-
պէս այդ ինչ ընկալանք են, ընկալանք, որոնք
նոյնքան համակրելի են «որքան համակրելի է
այն պարենկոտութիւնը, որը արտայայտում է
պ. հրատարակողը, յայտնելով որ ինքն «Արաք-
սի» I և II գրքերը հրատարակելու գործում այն-
քան ղեժարութիւններ (?!?) է կրել, որքան հա-
ղել թէ կարող են կրել ուրիշ հրատարակութիւն-
ները»:

Մի փոքր համետ եղէք, պ. հրատարակիչ:
Այդպիսով Պետերբուրգում հրատարակվող այդ
հանդէսը, որը յոյս ունի իր գոյութիւնը շարու-
նակել և նոյն իսկ առանց նախնական գրաքննու-
թեան հրատարակվել, ոչ թէ միայն գրական-քա-
ղաքական, որոշ ուղղութիւն ունեցող ամսագիր
չէ, այլ և չուրջ և խնամքով պատրաստած յո-
ղուածների ժողովածու էլ չէ, և այդ պատճառով
նա շատ ցածր է, քան թէ նոյն իսկ տարիներ
առաջ հրատարակվող հայ ամսագիրները: Երբ
«Արաքսի» յայտարարութիւնը լոյս տեսաւ սրա-
նից համարեա մի տարի առաջ, շատերը ի նկա-
տի ունենալով հրատարակչի անձնագրութիւնը,
այն միտքն էին յայտնում, որ այդ հրատարակու-
թիւնը մի առանձին բան չի լինի: Առանց նա-

խապաշարված լինելու դէպի անձնագրութիւն-
ները, մենք սպասում էինք տեսնել գործը,
և ապա դատել: Այնուս, որ յիշեալ գուշակութիւ-
նը արդարանում է: Չունենալով գրական մի աչ-
քի ընկնող ոյժ, չունենալով հրատարակութեան
ուղղութիւն տալու ընդունակութիւն, «Արաքսի»
հրատարակիչը իր շուրջը չէ խմբել և փոքր ի
շատ է լաւ, թէ և նոյն իսկ բոլորովին նոր ոյժեր,
նոր գործերը Ձուրկ լինելով թէ առաջինից և
թէ վերջիններից, հանդէսը, ի հարկէ, չէր կարող
մի առանձին բան ներկայացնել, և այժմ նրա
կատարելի գրական դերը շատ չնչին է թվում,
իսկ ապագան շատ կասկածելի:

Այն, այդ հանդէսը լաւ ապագայ ունենալու
չափ և շատ քիչ յոյս էր և տալիս: Մի ամբողջ
տարվայ ընթացքում երկու գիրք հրատարակելով
ուրեմն ժամանակ ունենալով մեծ խնամք տանե-
լու հանդիսի բովանդակութեան վերաբերմամբ,
«Արաքսի» հրատարակողը մի նոր բան չասաց,
մի նոր միտք չը յայտնեց, չը տպեց նոյն իսկ մի
բանի մշակված յողուածներ, չը ներկայացրեց մի
պրօգրամ, որ դէժ կարելի լինի կերակայանել,
թէ ինչ է ուղում, ինչ է իր հանդիսի նպատակը,
և ինչ գաղափարներով է նա իջնում գրական
ասպարէզը: Բայց չը նայած այդ բոլորին, հրա-
տարակողը մեծ պրէտէնզիա ունի իր գրա-
կան գործունէութեան մասին. երկրորդ գրքի մէջ
նա ասում է հետեւեալը. «Թէ «Արաքսը» իր բո-
վանդակութեամբ որքան կարող եղաւ իրագործել
այն նպատակը, որին նա ուղում է ծառայել,
այդ մասին մեզ վայել չէ խօսելու»: Այն, ձեռ
վայել չէր նոյն իսկ այդ պարբերութիւնը գրելու,
և թող ներքին մեզ նկատել, որ ոչ մէք և ոչ էլ
ձեռ ընթերցողներից որ և է մէկ ուրիշ չենք
հասկացել թէ ինչ է այն չնպատակը, որին ծա-
ռայում է ձեռ հանդէսը, և որը դուք երևակա-
յում էք իրագործել նոյն իսկ երկու տետրակ
հրատարակելով, երկու տետրակ, որոնք մէջ ամեն
բան դուք է կայ, բացի որ ոչ նպատակից, և
նպատակ իրագործող բովանդակութիւնից: Իսկ
թէ այդ նպատակը այնքան վոքը, այնքան նեղ
է, որ կարելի է իրագործել նոյն իսկ երկու տետ-
րակ հրատարակելով.—որքա գէտ մենք խօսք չու-
նենք, և հանդիստ խոցով կարող ենք ասել, որ
այդ կը նշանակէ թէ հրատարակողը ձեռնարկե-
լով մի հանդիսի հրատարակութեան, ուրիշ ոչ մի
նպատակ չէ ունեցել, բայց եթէ լաւ հանդէս
հրատարակել և իրագործել դառնալ:
Կա, ի հարկէ, ծիծաղելի է, և ոչ թէ միայն
ծիծաղելի, այլ և ցաւալի....
Վերջացնելով մեր աղանարկները «Արաքսի»
վերաբերութեամբ, մենք, ինչպէս առաջին ան-
գամ, այնպէս և այս անգամ, ասում ենք, ապա-
գայում աւելի աջողութիւն ենք ցանկանում այդ
հանդիսին:

էլ ստիպված չէին լինում որ միանգամ նրանց
ձեռքից բռնած տանել բռնակալ խալիֆայի մօտ,
ասելով՝ «ն տեր, կարդող մատաղ. որդին իմն ա,
քեզ եմ բաշխում. օրէս Որ սրա տերը դու ես.
աչքը հանի, մարդ շինի: Եր չուս (մինչև) վրդի-
վելը Սաղմուսը պրծնի, կալես երկու խոն ցորեն
կը չափեմ քեզ տամ»: Արժանապատիւ տէրը, աչ-
քի առաջ ունենալով այդ առատ վարձատրու-
թիւնը, մէկ առանձին եռանդով սկսում է միա-
միտ գիւղացու որդուն «մարդ շինել», և Աստ-
ուած էր դիտում թէ քանի-քանի տասնեակ ձի-
պոտներ էր դործ ածում խեղճի վրա, մինչև որ
կը հասնէր վարդապետը, երկու խոն (3 պոտը)
ցորենի վարձատրութեան օրը: Անցան տարիներ.
ուսումնարանը զրկվեց լաւ ոյժերից, որը պատ-
ճառ եղաւ նրա անկման: Թէ հողաբարձութիւնը
և թէ գիւղացիը սառան դէպի ուսումնարանա-
կան գործը, և մեր ուսումնարանը փակվեց մինչև
ընդհանուր հայոց ուսումնարանների մասին դուրս
եկած կարգադրութիւնները: Անցեալ տարի մի-
այն աջովեց համոզել գիւղացիներին, որ ան-
հրաժեշտ է ունենալ ուսումնարան. դրան քիչ չը
նպատակեց և զինուորագրութիւնը: Բայց հարկա-
ւոր էր ունենալ յարմար շինութիւն, որի համար
թէ գիւղացիը և թէ մի քանի ինտելիգէնտ ան-
ձինք չը խնայեցին իրանց լուսնաւ. կարծ ժամա-
նակամը շինութիւնը պատրաստեցինք, որը
իւր յարմարութիւններով անհամեմատ բարձր կա-
րելի է դասել Գանձակի հողեր ուսումնարանի
շինութիւնից, որի ողորմելի գրութիւնը յայտնի է
«Մշակի» ընթերցողներին: Վերջացնելով շինու-
թիւնը, հանդէս եկաւ ուսուցիչ հարցը. անցեալ
սեպտեմբերի սկզբներին գիւղացիը դիմեցին խն-
դիլքով հողեր կառավարութեան, բայց վերջինս
այսօր-վաղը անելով, ուսուցիչ ուղարկեց մեզ մի-
այն յունվարի վերջերին,— և այդպիսով ամբողջ
հինգ ամիս կորաւ, շնորհով հողեր կառավարու-
թեան անտարբերութեան շինա էլ ուսումնարա-
նի հողաբարձութիւնը նորից խնդրեք է տուել,
որ անցեալ տարվայ ուսուցիչը կրկին նստատե-
վի, որպէս զի առաջիկայ սեպտեմբերից ուսում-
նարանը բացվի: Բայց հողեր կառավարութիւնը
մի որոշ պատասխան չէ տուել մինչև այժմ, և
հաւանական է, որ ուսումնարանը կը բացվի ե-
կող փետրվարին կամ մարտին:
Ան հերքող տարին է, ինչ մեր խաղողի այ-
գիները արդիւնք չեն խոստանում իրանց տէրե-
րին. անցեալ երկու տարիները իսպառ կարկուտ-
հար եղան, իսկ այս տարի փայցան թող ա-
ված հիւանդութիւնից, որին քիչ չը նպատակեցին
անձները: Միամիտ գիւղացին անդադար դաճ-
գատվում է, որ իր «արին քորիկը» մնում է
անվաստակ, բայց այդ բոլորը վերաբերելով իր
միտքերին, կրկին անխղճ բռնում է աշխատան-
քի ծանր լուծը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՄՆԵՐ

Նախ քան ամբողջը մեր յողուածը, անկա-
րող ենք ուշադրութիւն չը դարձնել և հետեւեալ
կետերի վրա կարդալով Անաստասիանի մասին
գրած յողուածը, որը ճշմարիտ որ կազմված է
ամենահաստատ աղբիւրներից, այլ և մի և նոյն
համարի մէջ տպագրած մի ուրիշ կենսագրական
յողուած, մենք աղամայ յիշեցինք մեր մամուլի
մէջ ստորական շողորմութիւնները, որոնք ա-
մեն օր թափվում են այս և այն հասարակական
համարեա ոչինչ արժէք չունցող անձինքների ա-
ռաջ, անձինք, որոնք բաւական հմուտ են իրանց
կօպէկներով գնելու ամեն տեսակ տիտղոսներ և
լսելու հրապարակով ամեն տեսակ շողորմութե-
ութիւններ «Արաքսի» հրատարակիչը զուր է այդ-
պիսի ընթացքի հետևում. նա պէտք է գիտենար,
որ առանց իրան էլ հայոց մամուլի մէջ գոյու-

ՆԱՄԱԿ ԲԱՆԱՆՏԻՑ

Յուլիտի 23-ին

Բանանցի ուսումնարանը սկսած իր հիմնված
օրից (1873 թ.), մէկ կենտրոնական դպրոցի դեր
է խաղացել շրջակայ Գարհատ, Կերանց, Խաչա-
կապ և Չովղատ գիւղերի համար: Մի ժամանակ
այն է 1876—77 թվականներին Սր հոչակը
այն աստիճան տարածվել էր գիւղաբնակ ժողո-
վրդի մէջ, որ հետագոյն Անասայ լճի ափերից ան-
գամ գալիս էին այստեղ Բանանց կարդալու հա-
մար: Գիւղացիներից շատերի տանը օտար գիչե-
րթիկներ էին մնում, որոնցից նրանք քիչ չէին
օգտվում: Այդ աջողութեանը գլխաւորապէս նը-
րը և ուսուցիչների աջող ընտրութիւնները: Գիւ-
ղացի մանուկները, ազատված լինելով ժամագր-
քի ունենալով հրատարակչի անձնագրութիւնը,
այն միտքն էին յայտնում, որ այդ հրատարակու-
թիւնը մի առանձին բան չի լինի: Առանց նա-

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Յուլիտի 25-ին

Մի տղեղ սովորութիւն, այն է՝ մեռելի համար
հաց տալը (քելէի) այստեղ վերացած կարելի է
համարել: Գիւղի հասարակութիւնը միաձայն վրձ-
ուել է վերացնել այդ սովորութիւնը: Ռարախալի
երեւոյթ է, երբ ժողովուրդը սկսում է հողալ իր
մասին: Բայց ինչ դժուարութիւնների է հանդի-
պում մարդը մինչև որ կարողանում է հասկաց-
նել տղէտ ամբողջին մի որ և է սովորութեան
վատութիւնը, կամ կամուտում է մտցնել մի նոր
հասարակագոտ սովորութիւն: Օրինակ մի քանի
տարի սրանից առաջ մի քանի բարեմիտ անձանց
մէջ միտք էր յղացել մի հասարակական շտեմա-
բան շինել, ուր ստատ տարին գիւղացին կար-
դանար մի քանի օտար (սօմար՝ 2 պոտը) ցորեն
տալ և հետևաբար ցորենը քիչ եղած ժամանակը
էժան գնով առնել և սովի սարափելի նեղու-
թիւնները չը կրել: Ընկան դուք դուռն, ասացին,
խօսեցին, հասկացրին հասարակութեանը այդ

մտքի լաուրէիւնը Ամեն ոք առանձին հաւանում էր նախագիծը, բայց երբ գործը հասաւ իրագործման, բոլորը յետ կացան: Եւ որոնք էին այդ բարենպաստ գործի արդեւ եղողները: Գիւղին առաջնակարգ մարդիկ, գիւղի «խլանները», ունեւորները Մէլը կարծում է «թէ չը լինի ինձ խարեն», միւսը «հնչու հասարակաց շտեմարանին ցորեն տամ. լաւ չի լինի, որ մենակ ես հաւաքեմ և թանգ տարին (ինչպէս այս տարի, երբ սուտ մարը 3 ր. արծէ, մինչեւ առաջ 1 ր. 50 կ.— 1 ր. 60 կ. արծէ) իմ ուղած գնովս ծախեմ Այս արդար խորիմաստ մտածմունքը, անձնական հաշիւներ աչքի առաջ ունենալով, գործը քայքայում է հէց սկզբում: Եւ որ բարի նպատակն է իրագործվում մեզ մօտ ցաւալի է, այո, շատ ցաւալի: Մինչև երբ պիտի չիմանանք թէ անհատի բարեկաւութիւնը կախված է ընդհանուրի բարեկաւութիւնից, մինչև երբ չենք իմանալու թէ «միաբանութեամբ աճում են փոքրերը, իսկ անմիաբանութեամբ տապալվում են հոգրոները»:

ՆՅՐԻՒՆ ԼՈՒՐԵՐ

Թէ գիւղական ժողովուրդը որքան տգէտ է ղեռ մինչև այժմ նոյն իսկ թիֆլիսի շրջակայքում, և ինչպիսի հրէշաւոր նախապաշարմունքներով է վերաբերվում ղեկավար զանազան տարախոկիկ հիւանդութիւնները, կարող է ապացոյց լինել հետևեալ դէպքը: Այս օրերս մի քանի որտորներ թիֆլիսից գնում են քաղաքից ոչ հեռու գտնվող ԱՌԱՎ-ՍՕՓՆԼԻ գիւղի մօտ թուշուներ որսալու համար: Մի քանի անգամ թուշուների վրա հրացաններ արձակելուն պէս յանկարծ յիշեալ ղեռը դարձեալ, մահալինքով, բարձրութեամբ դուրս են վզուով գիւղից և մօտակալով որտորներին յայտնում են, որ գիւղում տարածված է «ճաղիկ» հիւանդութիւնը և գիւղի մօտ ման է դալիս «ճաղիկ բատմին», այսինքն «ճաղիկ» հիւանդութիւնը տարածող հրէշտակը, և արգելում են նրանց հրացան արձակել, որովհետև, գիւղացիների կարծիքով հրացանի գնդակը կարող է գիւղել այդ հրէշտակին և նա այն ժամանակ դարձանալով, կարող է ամբողջ գիւղը ընալինջ անել: Որտորները երկար վիճաբանութիւններից յետոյ ստիպվեցան ղեկանել կոպիտ գիւղացիների սպառնալքներին և հեռանալ գիւղի մօտից:

Վայրաքաղաքի լրագրիւնները հազորդում են, որ նորերումս մի ուռս կայաւածատէր խէրսօնեան նահանգում կտակել է գրողներին օժանդակել 0-դէսայի ընկերութեան 100 հազար թուրքի գումարը, յայտնելով իր կտակի մէջ այն միտքը, որ բոլոր հասարակական աշխատողները միջոց ունեն թուշակ ստանալու, այն ինչ հրապարակախօսները, իրանց ամբողջ կեանքում անձուէր կրօնով աշխատելուց յետոյ, հասարակութիւնը առաջնորդելուց յետոյ, ծերութեանը հասնելով նիւթական միջոցներից զուրկ են մնում, կամ մեռնելով վերջին ծայր աղքատութեան մէջ են թողնում իրանց ընտանիքը, երբէք իրանց և իրանց ընտանիքի վիճակի մասին չը մտածելով, այլ միայն հողալով հասարակութեան բարեկաւութեան մասին: Պէտք է վերջապէս, աւելացնում է կտակողը, սկսել մտածել և հոգ տանել այդ անձուէր աշխատողների, հրապարակախօսների մասին:

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ գրում են, որ այգուղի ծնողները առհասարակ անհոգ կերպով են վերաբերվում դէպի իրանց զուակները: Մանուկների վերա մանկնին հսկողութիւն չը կայ. այս օրերս, մի շարքովայ ընթացքում, Երեւանում խեղդվեցան երեք հոգի երեխաներ՝ թէ փողոցի առուի մէջ և թէ բազրի առաջնորդներում: Խեղդվողներից մին հայ է, միւսը ուռս, իսկ երրորդը թուրք:

Նոր ձևի 25 բուրձիանոց թղթագրամները ղեռ նոր են սկսվել տարածվել ժողովուրդի մէջ, և ահա արդէն կարողացել են նոր ձևի թղթագրամը կեղծել: Մօսկվայում, «Моск. Вѣд.» լրագրի խօսքերով յուլիսի 30-ին, փոստային մարկաներ գնելու ժամանակ, ուրիշ փողերի հետ տուել են մարկաներ վաճառողին և մի նոր ձևի 25-բուրձիանոց կեղծ թղթագրամ:

«Каспий» լրագրի խօսքերով, «Внязь Баря»

ТИНЬСКИЙ» շոքհնաւով օգոստոսի 4-ին Պարսկաստանից Բագու եկան Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի առաջնորդ Գրիգոր կաթողիկոսը, որը Էջմիածին է գնում, և հիւսիսային Ամէրիկայի Միացեալ-Նահանգներում պարսկական նոր նշանակված ղեկան շաջի-Նուսէյն-Կուլի-խանը իր ավիտայով Գիւսպանին ուղեկցում է դէպի Ամէրիկա հիւսիսային Ամէրիկայի Միացեալ-Նահանգները քաղաքացի դօկտօր Վլիխամ Վիլսոն Տօրէնս, որը շատ լաւ խօսում է պարսկերէն:

Հին-Նախընթացից «Кавказъ» լրագրին գրում են հետևեալը. «Յուլիսի 30-ին, առաւօտեան 10 ժամին տեղական բանտից փախաւ Ալիշտան անունով յանցարորը, որը մօտ մի տարի բանտարկված է Նախիչևանից Բահիւ-խանի բռնակարանից 17,000 ր. արժողութեամբ թանգագին իրեղեններ գողանալու համար: Բանտի վերականգնում, որը կալանաւորի փախելու ժամանակ ծառայական գործերով դաւաճական վարչութեան մէջ էր գտնվում, իմանալով փախուտի մասին, սկսեց քաղաքում խուզարկութիւններ անել, և կարողացաւ երկու երեխաներից իմանալ, որ փախած բանտարկեալը, կարմիր շապիկով, գնացել է դէպի Ալիշտանցան ճորոշ Ծարունահեղով հարցուրորդ նա տեղեկացաւ, որ այդ ճորուն, Նախիչևանից 30 վերստ հեռավորութեան վրա, կիրաւ գիւղում բնակվում է կալանաւորի աղբակներնից մէկը: Վերականգնում վերոյիշեալ գիւղը, գնալով, վերստին որով շրջապատեց այն տունը, ուր թագուած էր փախուտականը, և մէկ ուրիշայնիկի ու երկու կաղանների հետ միասին մտաւ այնտեղ: Կալանաւորին, որը կնոջ շորեր էր հագել, թագուած գտան ծննդաւրում և կրկին տարան բանտը»:

Մեր երկրի համարեա ամեն կողմերում միլիոն հիւանդութեամբ խաղողի վարակվելու լուրը, նոյն լրագրի խօսքերով, սաստիկ վախելի բնուէր է Մօսկվայի ղեկավարներին, որոնք կողմակաւ են դինի ստանում: Նրանցից շատերը շտապում են մեծ քանակութեամբ գնել մեր դինին, և այդ նպատակով կամ իրանք են կողմակաւ դալի, կամ ուղարկում են իրանց գործակալներին: Ի միջի այլոց, այդ գինեկաճառների թուում այս օրերս Մօսկվայից թիֆլիս եկաւ պ. Արսիպով, որը գինու մեծ առևտուր ունի մի քանի քաղաքներում: Պ. Արսիպով մի յայտնի քանակութիւն գինու առաւ իշխան Զօր-Վաձէի ֆերմայից և, բայցի դրանից, մի քանի հազար վեղո գինի գնելու հաւաքարի գինեաներում: Ապա մօտ 20 հազար վեղո գինի է առել պ. Արսիպով Ալիսալետօրում և Դամախում:

Մեզ ինքում են հազորդել որ այսօր, հինգ-շաբթի, օգոստոսի 11-ին, Վասիլէյսկի այգիում (Միջաշէլեան փողոց, հիւանդանոցի դիմացը) հայ դերասանական խումբը յօդուս պ. Գալթեանի ղեկնորդմանով կերպարներով խաղաւ 1) «Կնոջ քէֆը», մարտի 2-է, 2) «Խէյօի թուզը» և 3) «Էս էլ քի մօցիքութիւն»: Պ. Արտաշէսը կերպէ, իսկ անտարկանները ժամանակ կած է գինուրական խումբը: Այլընչ է 9 ժամին:

Այս օրերս թիֆլիսի Միթամիլիոն թաղում գիշեր ժամանակ մի սարսափելի աղմուկ և խառնաչիթութիւն ընկաւ: Բանը նրանումն էր, որ ուշ գիշերին, երբ յիշեալ թաղի ընտանիքները ամառվայ շրջի պատճառով իրանց տների բազրեում և կտորների վրա քնած էին, մի կանտաղած շուն վազվզում էր թաղի մէջ: Երկար արտուկից յետոյ վերջապէս ոտականական ծառայողներից մէկին աղողկցաւ. ասորձանակի հարուածով սպանել շանը կատաղած կենդանին բարեբաղաբար մարդկանցից ոչ մէկին չը վնասեց, բայց կծեց բազմաթիւ ուրիշ ստողչներին: Ոստիկանութիւնը խոստացաւ հրակիրը թշկին վերաբրում կենդանիներին թունաւորելու համար, սակայն մինչև այժմ այդ խոստումը մնաց անկատար, և եթէ կծված կենդանիները մնան այդ դրութեան մէջ, ի հարկէ, սպառչում նրանք էլ կը կատարեն և կը վնասեն շատերին:

Մօտ ժամանակներս թիֆլիսից ոչ հեռու, Գօմբօրի ճանապարհի վրա, մի քանի թուրք աւազակներ յարձակվում են այդ ճանապարհով անցնող խոտով բեռնած սայլերի վրա կամենալով խլել սայլերում լծված կցները, բայց ուռս սայլապանները, իրանց երկաթէ մանդաղներով կռու-

լով աւազակներին դէմ, չեն թողնում նրանց իրանց նպատակին հասնել: Մի քանի բողբոջ յետոյ յիշեալ աւազակները հանդիպում են թիֆլիսից գնացող մի այլ սայլի և եղները բացելով, քշում են որ գնան. սայլապանը մահակով կռուելով ղոցա հետ, կարողանում է աւազակներից յետ խլել եղներըց միայն մէկին, և տեսնելով որ միւսը անկարող է խլել, ճարահատել սկսում է դառնացած սրտով հայտնի աւազակներին, որոնք նրա հայրոյանից զայրանալով, յետ են դառնում բնակական հեռացած տեղից և հրացանի հարուածով սպանում թշուռս սայլապանին:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են օգոստոսի 6-ից, որ քանի մի օր անձրևեղաց յետոյ, այդտեղ բաւական չոր է այժմ:

Երկար շրջերից յետոյ վերջապէս օգոստոսի 9-ին, գիշերը, թիֆլիսում մի ժամու չափ սաստիկ քամի լինելուց յետոյ տեղաց անձրև և օգոստոսի 10-ից եղանակը բաւական հովացաւ:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են: «Օրմանեան կալուկոսը, ամսիս 4-ին, աւտօրիական շոքհնաւով մեկնեցաւ Կ. Պօլիս, ուղեկցութեամբ յայտնի պ. Մինաս Չերաղի: Նրանք Էջմիածնից էին վերադառնում: Սրբազանի մի ժամվայ չափ Բաթումում քանի մի երիտասարդներ հետ խօսակցութիւնը խոր սպաւորութիւն թողցւեալ նրա խօսակցիցների վրա և նրանք ավտօրիակ էին, որ աւելի երկար ժամանակ չը կարողացան միմիկարվել սրբազանի տեսակցութեամբ»:

«Վիլի» լրագրի խօսքերով, իշխան Մամիս Գտրիէլի, որը յայտնի է վրաց գրականութեան մէջ իր թարգմանութիւններով, այժմ վրաց լեզուով թարգմանում է Հոմերոսի «Նիլիականը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՔԱՎԱՆ ԱՆԱԶՆԻ ԳՈՐԾՈՂ

Իրանական գործիչները արարքներ վերաբնանելու համար մի մասնաժողով կազմելու վերաբերեալ օրինադիւր շարունակվում է զննվել անգլիական համայնքների ժողովում: Այդ օրինադիւր ներկայումս զննվում է մի այնպիսի արտասուր որոշութեամբ, և այնպիսի յարձակութեան և խիտ ընտրութեամբ, որ ընդհանրապէս ոչ թէ միայն գիւղում է պարլամենտի անունը և պատճին, այլ և դժգոհութիւն է յարուցանում հասարակական զանազան շրջաններում: Մարտի 1-ի միտարութիւնը սկսել է նոյն իսկ հակապարլամենտական միջոցներ ձեռք առնել իրանական, կամ ուրիշ խօսքով, պարնէլական կուսակցութեան ձեռքը: Նրա ինքնապաշտպանութեան դէպքերը խիտ համար: Համայնքների ժողովը արդէն ընդունեց այն առաջարկը, որ պահանջում է, որ եթէ մինչև մի յայտնի ժամը, իրանական գործիչներ արարքներ չընեն, համար կազմվող մասնաժողովի վերաբերեալ վիճաբանութիւնները չեն աւարտվի, այն դէպքում օրինադիւր մնացած մասը պէտք է ընդհատվի առանց վիճաբանութիւնների և առանց աւարտվութիւնների: Այդ արտասուրը առաջարկը արդէն ընդունված է գործադրվեց է: Գա մի հարուած է իսկապէս, որ համայնքների ժողովը տուեց խօսքի ազատութեան սկզբունքներ: Ճշմարիտ է շատ անգամ, ինչպէս անգլիական, այնպէս և ուրիշ երկրների պարլամենտներում, փոքրամասնութիւնը կամ նոյն իսկ ընդդիմադրական կուսակցութիւնը ամբողջ օրեր և շաբաթներ յետաձգում էր այս կամ այն հարցի վճռելը: անգաղար ճառեր և անվերջանալի ճառեր ասելով ու գեղուցումներ անկող զննվող հարցի մասին: Օգուտ ջարդելով խօսքի ազատութիւնից ընդդիմադրական կուսակցութիւնը կարողանում էր երկար ժամանակ յետաձգել զանազան առաջարկութիւնների վճռելը, թէև շատ անգամ այն երկար ճառերը, որոնք խօսվում են, շատ քիչ կայ են ունենում: Ըռն հարցի հետո Բայց միթէ այդ արդէն մի ծանրակշիւ պատճառ է խօսքի ազատութեան սկզբունքը խախտելու համար: Միթէ քիչ է պատահում, որ նոյն իսկ ճշմարտութիւնը փոքրամասնութիւն կազմող ընդդիմադրականների կողմն է լինում, և եթէ այսօր նրանց կարծիքը սխալ է համարվում, մի քանի ժամանակ անցնելուց յետոյ, աւելի ու աւելի է տարբանում այդ կարծիքը, փոքրամասնութեան

պաշտպանած միտքը, և ի վերջոյ մի առաջնական անցնելուց յետոյ ընդունվում է մեծամասնութեան կողմից այն, ինչ որ առաջ սխալ և անօգուտ էր համարվում:

Պարլամենտական կեանքում այդպիսի երևոյթները շատ են պատահել: Եւ այդ պատճառով պահպանողական միտարութեան ձեռք առած արտասուրը, և խօսքի ազատութեան սկզբունքին հակասող միջոցը միանգամայն անհամակերպի միանգամայն անադիւր է: Սակայն, ինչպէս երևում է, անհամակերպի և անադիւր միջոցների դիմելը իրանական անկախութեան մտքի հակառակորդները բանակում ստորական է դարձել, և դրան կենդանի ապացոյցներից մէկը կարող է համարվել երբեմն իր քաղաքական բաղադրանքներով խոսքով յայտնի Չէմբերլինի արարածները, որի մասին և իսկապէս մինչ ուղում էինք խօսել մեր ներկայ յօդուածում: Համայնքների ժողովի վերջին նիստերից մէկում, երբ զննվում էր վերև յիշած մասնաժողովի վերաբերեալ օրինադիւրը, մի մեծ խաղաղակցութիւն բացվեց, որի հետոյ այդ նոյն Չէմբերլինին էր, որ այժմ Սալաբերի միտարութեան գործունեայ ոյժերից մէկն է համարվում, և յայտնի է իրրա Գրագուտնի դրօշակին դաւաճանող մարդ: Այդ նոյն Չէմբերլինի դաւաճանելով ազատամիտ կուսակցութեան ուղղութեան, այժմ դարձել է իր նախկին բարեկամների ամենամեծ թշնամին: Մասնաւոր կատարի հակառակորդ է իրանական գործիչներին և առհասարակ իրանական հարցին Հասկանալի է թէ այդպիսի մարդուն ինչ կերպով ատում կը լինեն թէ պարնէլականները և թէ առհասարակ ազատամիտ կուսակցութիւնը: Վերջին վիճաբանութիւնների ժամանակ պարնէլականներից մէկը Չէմբերլինին ուղղակի Յուդայ անուանեց: Բայց դրանից աւելի նշանաւոր վարպօլի տակ ծածկված այն գաղտնիքներն էին, որ համայնքների ժողովում հրապարակ հանեց Պարնէլ: Խօսակցութիւնների դէմ, և ցոյց տալով թէ որքան ուշադրութեան արժանի են նրա յարձակութեանը իրանական կուսակցութեան դէմ, Պարնէլ յայտնեց, որ այդ նոյն Չէմբերլինին, երբ ղեռ ևս Գրագուտնի միտարութեան անգամ էր, շատ անգամ հարողում էր իրանական պատգամաւորներին միտարական դադարիչները: Այդ բոլորը, ասեց Պարնէլ, նա ամուտ էր անձնական շահից դրդված: Այդ խաղաղական նորութիւնը մեծ աղմուկ հանեց պարլամենտական շրջաններում և հատարակութեան մէջ: Ինքը Չէմբերլինին պնդում էր, որ ինքը երբէք այդպիսի բան չէ արել: Սակայն Պարնէլ և իւրայինները յայտնեցին, որ իրանք այդ բանը ապացոյցանելու շատ փաստեր ունեն: Թէ ինչպիսի խաղաղական մանրամասնութիւններ կը բանան այդ փաստերը,— դա մօտիկ ապագայում կը տեսնենք, բայց դարձանալի չէ իսկապէս, որ Չէմբերլինի նման մարդը, որը հրապարակով դաւաճանեց իր կուսակցութեանը և անցաւ. հակառակ բանակի կողմը,— և այդ էլ, ինչպէս պնդում են, փառախորտութիւնից և անձնական շահերից դրդված,— թող տար իրան և այնպիսի վարմունք, որի մէջ նրան մեղադրում է Պարնէլ: Չէմբերլինին, ինչպէս երևում է նրա քաղաքական-հասարակական գործունեութեան պատմութիւնից, այնպիսի մարդկեանցից է, որոնք ինչքան էլ բարձր պաշտօնների մէջ էլ լինեն, ինչքան էլ աչքի ընկնեն իրանց վարած պաշտօններով և իրանց դիւրբով, միշտ մնում են ողորմելի հասարակական տեսակետից, երբէք չեն կարողանում մոռապութեան ստալ իրանց անձնական, ետական դիտումները: Այդպիսիները թէև երբեմն կարողանում են դիմակաւորվել, ու ծածկել իրանց իսկական պատկերը, բայց վերջ ի վերջոյ ամեն բան բացվում է, և հասարակութիւնը տեսնում է թէ ինչ հակակերպ մարդիկ և ինչ քաղաքանիդիներ են եղել նրանք, որոնք կարողացել են թող փակ, փայլել և կանգնել մի ամբողջ ժողովուրդի գործերի գլխին....

ԲԷԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Վարդը է արդէն, որ Ֆրանսիայում, կրթութեան ասպարիզի վրա, գլխաւորապէս մանկավարժական աշխատանք, երկու որոնք կուսակցութիւններ կան, որոնք միմեանց դէմ կռու են մը գրում, և որոնցից մէկը պաշտպանում է կրթական ուղղութիւնը, իսկ միւսը բնական ուղղութիւնը դպրոցներում, կամ ուրիշ խօսքերով ասած, այդ կուսակցութիւններից մէկը այն կար-

